XVIII Դ. ՍԵՂԱՆԻ ՀԱՅԱՏԱՌ ԶԱՐԴԱԽԱՋ

Մ. Ե. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հ. Վ. ՍԱՐԴՍՅԱՆ

Ոսկերչությունը Հայաստանում հնագույն և տարածված արհեստներից է։ Այդ մասին են վկայում ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական գաղթ-օջախներում ստեղծված բազմաթիվ ուշագրավ առարկաներ, որոնք, հիրավի, բարձր արվեստի ու արհեստի արժեքներ են։ Արհեստավորները պատրաստել են բազմատեսակ առարկաներ, որոնք այսօր որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արվեստի այդ ճյուղի ուսումնասիրության համար։ Դժվար չէ նկատել, որ չնայած տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, հայ ոսկերիչ-վարպետները սերնդից սերունդ փոխանցել են իրենց արհեստը՝ հաճախ գտնվելով մայր հայրենիքից հեռու։ Հայ մշակույթի հուշարձանների զգալի մասը՝ սկսած ճարտարապետական կոթողներից, գրչագիր մատյաններից, տարազի տեսակներից մինչև զարդաքանդակները, տարագրության հետևանքով ոչնչացվել են կամ էապես խաթարվել։

Վերջերս Հայաստանի պատմության թանգարանը փարիզաբնակ հնասեր Նվարդ Գափամաճյանից ստացավ ուշ միջնադարյան ոսկերչության ուշագրավ մի նմուշ՝ սեղանի արծաթյա ոսկեջրած զարդախաչ (երկարությունը՝ բռնակի հետ՝ 20,5 սմ, տրամագիծը՝ 9 սմ)[1]։

Հավասարաթև զարդախաչի դեպի ծայրերը լայնացող խորությունների մեջ և կենտրոնում ագուցված են արծնապատ պատկերավոր կլոր մեդալիոններ՝ եզրափակված հորիզոնական գծերի զարդագոտիով։ Խաչի թևերը լայն քանդակազարդ շրջանակի մեջ ունեն նուրբ ցանցկեն նախշազարդեր՝ 39 ոչ թանկարժեք գունավոր քարերով։ Թևամիջյան ազատ տարածությունները լրացված են շրջանակից ելնող ցանցկեն շուշանաձև նախշերով, որոնք ունեն մեկական փիրուզներ։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խաչի երեսի հինգ մեդալիոնների գունավոր նկարները։ Կենտրոնում, բաց երկնագույն ֆոնի վրա աստվածամայրն է մինչև գոտկատեղը՝ գլխին լուսապսակ, ձախահայաց դեմքով, մանուշակագույն շրջազգեստով։ Նա ձախ ձեռքով գրկել է մանուկ քրիստոսին, աջով՝ բռնել երկիրը ներկայացնող խաչապսակ գունդը։

Խաչի թևերին առկա գնդերի վրա չորս ավետարանիչների խորհրդանիշերն են։ Վերևում պատկերված է մարդակերպ թևավոր առյուծ՝ գլխին լուսապսակ, առջևի թաթերով ավետարան բռնած։ Աջ կողմում՝ հանդիպահայաց պատկերված է մարդկային դեմքով թևավոր հորթ՝ գլխին լուսապսակ, առջևի աջ ոտքով ավետարան բռնած, ներքևի թևի վրա հրեշտակ է՝ լուսապսակով։ Չորրորդ թևի վրա պատկերված է արծիվ, որը ձախ ճիրանով բռնել է ավետարան։ Խա-

---

1 Նվարդ Գափամաճյանը թանգարանի լավագույն բարեկամներից է։ Տարիներ շարունակ նա Սովետական Հայաստան է ուղարկել արժեք ներկայացնող նմուշներ, որոնք խնամքով պահվում են Հայաստանի պատմության թանգարանում։ Սեղանի զարդախաչը թանգարանին հանձնվեց Սամվել Մաթևոսյանի միջոցով։

ի երկրորդ երեսի շրջանակը իր զարդաքարերով և նախշերով կրկնությունն է առաջին երեսի, միայն այն տարբերությամբ, որ արծաթյա գնդերի վրա փորագրված է. Տ[ե]ր յ[ի]շ[ա]տ[ա]կ է ս[ուրբ] խաչս Յակոբին Մարիամին ի գուղն Մանճուսուն ի դուռն ս[ուրբ] խաչ եկեղեցի թվի ՌՃՀԹ։

Խաչը պտուտակով ամրացված է վերևի մասում գնդաձև բռնակին, որը ծածկված է նուրբ արծաթաթելերի և հատիկների նախշազարդերով։

Հայտնի է, որ զարդախաչերը պատրաստվել են հայ եկեղեցիների բեմերը զարդարելու նպատակով։ Նկարագրված խաչը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն թվագրված է և հայտնի է պատրաստման վայրը։ Ըստ արձանագրության՝ այն պատրաստվել է Կեսարիայի Մանճուսու գյուղի բնակիչներ Հակոբի և Մարիամի պատվերով, հավանաբար տեղի հայ վարպետների ձեռքով։ Մանճուսու հայկական գյուղը գտնվել է Կեսարիայի հյուսիս-արևելյան մասում։ Այն հայտնի է նաև Մասոն, Մանսոն և Մանտիսոն անուններով[2]։ Առկա տեղեկությունների համաձայն՝ Մանճուսուն բնակավայր է եղել բյուզանդական ժամանակաշրջանից։ Հովհաննես Աբեղա գրչի մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ XV դ. գյուղն ունեցել է երեք հայկական եկեղեցի՝ ս. Աստվածածին, ս. Խաչ և ս. Թորոս[3]։

Այս փոքրիկ տեղեկությունը վկայում է, որ ս. Խաչ եկեղեցին գյուղի հին հուշարձաններից է։ Մինչև 1915 թ. Մեծ եղեռնը Մանճուսուն ապրել է լիակատար կյանքով։ Ըստ երևույթին, նկարագրվող խաչի ստեղծման ժամանակ գյուղը եղել է բարեշեն։ Ս. Խաչ եկեղեցին շինարարական որոշ վերափոխություններով պահպանվել է մինչև XX դ. սկզբները։ Հայտնի է, որ մինչև 1912 թ. եկեղեցում պաշտոնավարել է քահանա[4]։

Ներկայացվող խաչը աչքի է ընկնում պատկերների առատությամբ։ Իր ինքնատիպությամբ ուշագրավ է խաչի կենտրոնի գնդի աստվածամոր պատկերը։ Սրբապատկերագրության մեջ դա հայտնի է օդիգիտրիա անվանումով[5], որը տարածված է եղել Բյուզանդիայում դեռ վաղ միջնադարից (VII—VIII դդ.) և մեծ ընդունելություն է գտել նաև Փոքր Ասիայում։ Նկարագրվող խաչի ինչպես աստվածամոր, այնպես էլ մանուկ Քրիստոսի դիմանկարները թեև առաջին հայացքից աչքի են ընկնում իրենց պարզությամբ, բայց իրականում ունեն զգացմունքներ արտահայտող կերպարներին հատուկ հոգեբանական նկարագիր։ Վերին աստիճանի մարդկային են, արտահայտիչ, չնայած իրար նման դեմքերի կլորությամբ և կատարման ոճով, բայց միաժամանակ տարբեր. մեկը կանացի նրբությամբ, մյուսը՝ մանկական անհոգությամբ և գերմարդու աստվածային առանձնահատկությամբ։

Աստվածամոր պատկերով մեդալիոնը արժեքավոր է կերպարի գլխի շուրջ պատկերված մոլորակների, արևի, լուսնի և լուսաստղի արտացոլմամբ, որովհետև հունա-հռոմեական, բյուզանդական, ռուսական սրբապատկերագրության մեջ աստվածամայրը մանկան հետ պատկերելիս բացակայում է մոլորակների վերարտադրությունը։ Այս տեսակետից ներկայացվող խաչի աստվածամոր պատկերը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, մանա-

2 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Կահիրէ, 1937, էջ 787։
3 Նույն տեղում, հ. Բ, էջ 1850։
4 Նույն տեղում, էջ 788։
5 Н. П. Кондаков, Иконография Богоматери, СПб, 1911, стр. 26.

վանդ, որ այդ առանձնահատկությունները պատահական չեն։ Չնայած վաղուց ի վեր քրիստոնեությունը խոր արմատներ էր գցել Կեսարիայի հայ իրականության մեջ, այնուամենայնիվ «հայոց հավատը այստեղ պարուրված է բազմաթիվ նախապաշարումներով, որոնք թերևս հեթանոսական վերապրուկներ են»[6]։

Կեսարիայի հայերի մոտ շատ ամուր էր հինը, որը Ա. Ալպոյաճյանը արդարացիորեն բացատրում է ժողովրդի գոյապահպանման ձգտմամբ։ Բնականաբար, Կեսարիայի հայը ստեղծում էր սրբերի և առաջին հերթին Քրիստոսի ու աստվածամոր երևակայական, իր պատկերացմանը հատուկ՝ մարդկային դիմապատկերներ։ Եվ պատահական չէ, որ տեղի նկարիչներն ու ոսկերիչ վարպետներն իրենց ստեղծագործություններին տվել են ժողովրդական բնույթ։ Կեսարիայի նկարիչների ստեղծած սրբապատկերները, չնայած ընդհանուր կոմպոզիցիայի նմանությանը, խիստ տարբերվում են հատկապես հունական նկարիչների ստեղծած Աստվածամոր և Հիսուսի նկարներից։ Համեմատում ենք հունական նկարիչների հետ, որովհետև վերջիններս կողք-կողքի ապրում էին Կեսարիայի հայերի հետ և ստեղծագործում յուրովի[7]։

Այսպիսով՝ նկարագրվող հուշարձանը Կեսարիայի հայ վարպետի գործ է։

Կեսարիան հայտնի էր իր արհեստավորներով, նաև ոսկերիչ վարպետներով։ Փոքրասիական այլ վայրերի հետ մեկտեղ՝ ոսկերչությունն այստեղ հարկի էր հին ժամանակներից ի վեր։ Ոսկերչական նուրբ աշխատանքով աչքի է ընկնում զարդախաչի բռնակը, որը պատրաստված է հատիկի և թելի հյուսվածքի ձևով։

Ներկայացվող խաչը XVIII դ. արծնապատ գունավոր պատկերների կատարման ինքնատիպությամբ, գույների ներքին երանգավորմամբ և զարդանախշերի գեղեցկությամբ Կեսարիայի հայ ոսկերչության լավագույն նմուշներից է։

НАПРЕСТОЛЬНЫЙ КРЕСТ XVIII ВЕКА С АРМЯНСКОЙ НАДПИСЬЮ

М. Е. КАРАПЕТЯН, Г. В. САРКИСЯН

Резюме

В Государственном историческом музее Армении хранится напрестольный крест, сделанный в Кесарии в 1730 г.

С лицевой стороны на концах креста и средокрестия укреплены медальоны с эмалевым изображением Богоматери с младенцем Христом и символами четырех евангелистов. Крест окаймлен декорированным ободком с 39 разноцветными камнями. На обратной стороне выгравирована армянская надпись: «Господь, святой крест в память Акопа и Мариам из села Манчусу, посвященный церкви Святой Крест, год 1730».

К кресту прикреплена ажурная рукоять, выполненная техникой зерни и филиграни.

Исследуемый памятник отличается оригинальностью исполнения сюжетов, своеобразием цветовой гаммы эмалевых украшений и высокой техникой изготовления. Все это ставит его в ряд лучших образцов армянского ювелирного искусства XVIII в.

6 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 1744։
7 Նույն տեղում, էջ 1745։